Արձանագրություն N 3
«ՀԱԿԲՀ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան «05» «հունիսի» 2018թ.
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Հակոբյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Հովհաննիսյանը
Ա. Էկտիբարյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Գևորգյանը

Ի. ՀԱԿԲՀ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գնահատման մասին
(Մ. Հակոբյան)

Ընդունել ի գիտություն, որ.

- 29.05.2018թ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԱՆԻՏՈՒՐ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում՝ եթե ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:
- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման մասին եզրակացությունը սահմանված ժամկետներում տրամադրվել է: Կոմիտեից ստացված եզրակացության համաձայն «ԱՆԻՏՈՒՐ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ուներ 590077 (հինգ հարյուր իննսուն հազար յոթանասունյոթ) ՀՀ դրամ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է օրենքով սահմանված ժամկետանց պարտավորությունների շեմը:
- Հանձնաժողովի քարտուղարի կողմից 04.05.2018թ. գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:
- Հանձնաժողովի կողմից լրացված գնահատման թերթիկներում Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը Մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ գնահատվել են անբավարար:

2. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշման մասին
(Մ. Հակոբյան)

Հանձնաժողովը որոշեց.

-Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության գնահատման արդյունքում, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 44-րդ կետը, մերժել «ԱՆԻՏՈՒՐ» ՍՊԸ-ի հայտը,

-հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետը՝ մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը մասնակցի կամ կոմիտեի կողմից լրացուցիչ տեղեկատվություն չներկայացնելու դեպքում, «ԱՆԻՏՈՒՐ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ուղարկել լիազորված մարմին,

- ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը,

-- հաստատել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Հակոբյան

Անդամներ՝ _____ Մ. Հովհաննիսյան

_____ Ա. Էկտիբարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն. Գևորգյան